

NOUVEL HAY MAGAZINE

SANS FRONTIÈRES

**Չարմանագան 2024:
արեւմտահայերէնով ամառնային
Միացեալ**

Զարմանազան 2024

Արեւմտահայերէնի ամառնային խտացեալ ծրագիր
Սփիւռքի բոլոր պատանիներուն, երիտասարդներուն
եւ ուսուցիչներուն համար

Միացեալ Նահանգներ

Յունիս 7 → 27, 2024

10-էն 17 տարեկաններուն համար
Քալիֆորնիայի Ֆրէյժըր անտառին մէջ

Դիմումի ժամկէտ՝
Նոյ. 10, 2023 → Յուն. 31, 2024
Քալիֆորնիայի ժամով
իրիկուսն 11:00-ին

→ zarmanazan.com ←

Ֆրանսա

Յուլիս 11 → Օգոստոս 6, 2024

10-էն 17 տարեկաններուն
եւ ուսուցիչներուն համար

Յուլիս 8 → Օգոստոս 8, 2024

18-էն 24 տարեկաններուն համար

Ալպեան լեռնային շրջանին մէջ

Դիմումի ժամկէտ՝
Դեկտ. 10, 2023 → Փետր. 15, 2024
Ժամը 23:00
Կրիսիչի միջին ժամով

Սփիւռքի
արեւմտահայերէնի
ուսուցիչներու
համալսարանական
ծրագիր՝ Ինալքոյի (Փարիզ) հետ
համագործակցութեամբ:

Ֆրանսա - ճամբարը վաւերացուած է Ֆրանսայի Կրթութեան և Երիտասարդութեան Նախարարութեան կողմէ:
Քալիֆորնիա - ճամբարը վաւերացուած է Քըրն Գաւառի Բնութեան Ստորգապահութեան Բաժանմունքին կողմէ:

FUNDAÇÃO
CALOUSTE GULBENKIAN
COMUNIDADES ARMÉNIAS



Mille
et un
mondes

inalco

Ուրախութեամբ կը տեղեկացնենք որ 2024-ին արեւմտահայերէնով ամառնային «Զարմանազան» ճամբարը տեղի պիտի ունենայ թե՛ Ֆրանսայի, թե՛ Միացեալ Նահանգներու մէջ: «Զարմանազան»ը այն վայրն է, ուր Սփիւռքի երեխաները, պատանիները, երիտասարդները, ուսուցիչները եւ ուղեկիցները կը միանան եւ լեզուն հաճոյքով կ'ապրին:

Ծրագիրը ունի երեք բաղադրիչներ, որոնք սերտորեն առնչուած են իրարու.

— 10-էն 17 տարեկան երեխաներու եւ պատանիներու համար նախատեսուած ծրագիր մը (Ֆրանսա եւ Միացեալ Նահանգներ),

— 18-էն 24 տարեկան երիտասարդներու համար նախատեսուած ծրագիր մը (Ֆրանսա),

— Սփիւռքի արեւմտահայերէն դասաւանդող ուսուցիչներուն ուղղուած համալսարանական ծրագիր մը (Ֆրանսա):

Պատանիները եւ երիտասարդները պիտի մասնակցին համատարիքային ու բազմատարիքային զանազան աշխատանոցներու, որոնք կ'ընդգրկեն տեսողական եւ լսատեսողական արուեստներ, արհեստներ, երաժշտութիւն, մարմնային եւ թատերական արտայայտութեան զարգացում, ազատ գրութեան եւ գրական ընթերցումներու նուիրուած նիստեր, խմբային խաղեր, բնութեան մէջ պտոյտներ եւ ճամբորդութիւններ:

Բոլոր նիստերուն ու աշխատանոցներուն ընթացքին՝ յարաբերութեան եւ հաղորդակցութեան լեզուն պիտի ըլլայ հայերէնը, մասնագետ ու տաղանդաւոր ուղեկիցներու ներկայութեամբ: Առօրեայ կեանքին բոլոր պահերը միասնաբար կը կատարուին ու կ'ապրուին:

Միացեալ Նահանգներու առաջին ճամբարը տեղի պիտի ունենայ Քալիֆորնիոյ մէջ, 2024-ի Յունիս 7-էն Յունիս 27: Դիմումները բաց են մինչեւ 2024-ի Յունուար 31, տեղական ժամով իրիկուան 11-ին:

Ֆրանսայի 8-րդ ճամբարը տեղի պիտի ունենայ Ալպեան լեռներուն մէջ, 2024-ի Յուլիս 11-էն Օգոստոս 6: Դիմումները պիտի բացուին 2023-ի Դեկտեմբեր 10-ին եւ պիտի փակուին 2024-ի Փետրուար 15-ին, Կրիսիչի ժամով 23:00-ին:

Անհրաժեշտ է յարգել ժամկետերը: Երկու ճամբարներու մասնակիցներուն թիւը սահմանափակ է:

Չարմանազանի դիմելու եւ այլ տեղեկութիւններու համար այցելեցէք zarmanazan.com կայքէջը:

Գալով Սփիւռքի արեւմտահայերէն դասաւանդող ուսուցիչներուն ուղղուած խտացեալ ծրագիրին՝ մասամբ տեղի պիտի ունենայ Ֆրանսայի «Չարմանագան»-ին ընթացքին: Դասընթացքը պիտի շարունակուի առցանց՝ 2024-2025 ուսումնական տարուան ընթացքին, Ինալքոյի (INALCO-Institut National des Langues et Civilisations Orientales) կողմէ եւ պիտի աւարտի վկայագիրով մը: Ծրագիրը կը վարեն մասնագետներ, որոնք կ'առաջարկեն թէ՛ տեսական դասաւանդութիւն մը, թէ՛ ալ վերապատրաստութեան խմբային աշխատանքներ: Այս ծրագիրին միայն 15 ուսուցիչ կարելի է ընդունիլ: Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը 2017-ին ձեռնարկեց «Չարմանագան» մանկավարժական յայտագիրին, որպէս արեւմտահայերէնի վերաշխուժացման ծրագրին մէկ բաժինը: Կազմակերպուած է Ֆրանսայի Mille et un mondes ընկերակցութեան եւ Փարիզի INALCO (Արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու Ազգային Հիմնարկ)-ին համագործակցութեամբ: 2024-ին «Չարմանագան»ը տեղի պիտի ունենայ նաեւ Միացեալ Նահանգներու մէջ, Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Վարժարաններու Ինսամակալ Մարմնի համագործակցութեամբ եւ աջակցութեամբ:

Ֆրանսայի Չարմանագանը վաւերացուած է Կրթութեան եւ Երիտասարդութեան Նախարարութեան կողմէ: Միացեալ Նահանգներու Չարմանագանը վաւերացուած է Քալիֆորնիոյ Զըրն Գաւառի Բնութեան Առողջապահութեան Բաժանմունքին կողմէ: